

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

172

ՏԵՂՐԱՎ

ԽՈՐՎԻՆ

ԵՍԱԿ



891.99
Խ-85

19 NOV 2011

№ 8 «Կարմիր Զինվոր»-ի գրադարան № 8

1.99

- 85.

ՏԻԳՐԱՆ ԽՈՐՈԽՆԻ

Ն Ա Մ Ա Կ

Յ Ա Գ Ո Յ Ւ Ն

— · —

Պարտիկուլար

1927

13 MAY 2013

34814

24297, 59

Հայպոլիգրաֆի Դարաքիլսայի բաժանմունք
Պատ. № 422 Տիրաժ 3000 Գրառեալվար № 146 ա

ՆՐԱՆՑ ՔՅՈՇՔ ՈՒ ՍԱՐԵՔԻ ՅԵՎ

ՏՈՒՆ ՈՒ ՏԵՂԻ ՄԱՍԻՆ



Ուղում եմ պատմել քեզ, ուղում եմ գրել
նրանց մասին:

Յես նրանց չեմ տեսել կենդանի, նրանք ի-
նարկե հիմա չկան:

Բայց յես յեղա նրանց «տան»-ը:

Սիրելի Հազո!

«Տանը» վոր ասում եմ, դու չհասկանաս
թե մեր աների նման ինչ վոր ասուն եմ մտել
և գրա համար պիտի պլուխտ ցավացնեմ, գրեմ
գրա մասին, չե, յեթե եղակես լիներ, յես ըսկի
յել չեյի գրի:

Մեր աների թիվը ենքան անհամար ե, են-
քան հասարակ են նրանք, վոր դու յես ապրում
նրանց մեջ, դու լով ծանոթ ես նրանց և կա-
րող ես անգամ քու մատների վրա հաշվել նը-
րանց «գույքն» ու «կարողությունը»:

Չես հիշում, վոր յերբ պատահում եր հա-
վար եր ընկնում ու դիմում եյինք փախուստի,
կարողանում եյինք մեր շալակն առած փախցը-
նել եղ ամբողջ «գույքն» ու «կարողությունը»:
Այդպես եր մեր տունը: Այդպես եյինք մենք:



Այդպիս չեն նրանց «տունն ու տեղը»։ Այդպիս չեն յեղել նրանք։

Նրանք ապրել են դղյակներում, ապարանքներում և ամրցներում։ Նրանց ճակատը յերբեք և յերբեք չի քրտնել և ձեռքերն են մեր սարի ձնից ել ճերմակ են մնացել։

Հասկացա՞ր մի բան։ Լավ, մեր լեզվով ասեմ։

Նրանք քյոշք ու սարեքում, բաղ ու բաղչեքում են նստել ու յելել։ Կերել են ու խմել արծաթե ու վոսկե ամաններում, հարբել են ու մըափել ապրշումի մեջ և միայն... ստորագրություն դրել։

Յես վախենամ Հագո ջան, քեզ թվա, թէ յես Մեծ նանի հեքիաթներից պիտի պատմեմ։ չե, ջանը՝ մ, յես քեզ պիտի դրեմ այն ամենի մասին, ինչ վոր տեսա նախկին Պետրոգրաֆ քաղաքում։

Պետրոգրադը հիմա բոլշևիկների քողաք եւ կոչվում ե Լենինգրադ։ Ես քաղաքի բանվորները շատ գործ են կաատերել իմ, քո և շատ մարդկանց ազատազրության համար։ Լենինը շատ եր սիրում այդ բանվորներին։ պարծանք եր համարում նրանց մեջ ապրել ու աշխատել և նրանց համար ջան մաշել։

Բայց առաջ, յերբ ոռւս թագավորների կամքն եր իշխում եղ քաղաքում, նա կոչվում եր Պետրոգրադ—Պետրոս Մեծ թագավորի քաղաք։

Պետրոգրադի միջոկ անցնող Նեվա գետի մի ափին, կանգնած ե ոռւս թագավորների քյոշքը։

Նեվա գետի մյուս ափին, ուղիղ քյոշքի դիմաց, նստած և ժռայլ ու ահարկու, մի մեծ գերեզմանի նման—Պետրոպավլովսկի բերդը։

Սու 300 տարի յե նրա ուսերին նստած։ 300 տարի նա ճրագներ ե մարել, կյանքեր ե փթացրել և նրա բորբոսնած գրկում, քանի սիրու ե մգլել, ո քանի...։

Հազարավոր ճորտ գյուղացիներ են աշխատել այդ բերդի կառուցման համար։

Պետրոս Մեծ թագավորը հրամայել ե բոլոր ազատազրկվածներին, խեղճերին ու ճնշվածներին մտրակի տակ բանեցնել։

Հազարավոր թշվառ մարդիկ հող ու քար են կրել շատ հետուներից, այդ հսկա գերեզմանի հիմքը դնելու համար։

Յեկ անթիվ թշվառներ ու ճորտեր, իրենց արյունի գնով, կառուցել են մահասառառ կամերաներ, մութ ու ցուրտ կարցեր։ Ներ, վոր հետո, իրենց լավագույն, հեղափոխական զավակների կյանքը խամրի եղանգ։

Թագավորների ձմերային քյոշքի դիմաց ե
կանգնած այդ բերդը:

Տարիների սկ հուշարձանը՝ անթիվ և անա-
նուն հերոսների գերեզմանը։ Տամնյակ տարինե-
րով են նստել եղ բերդում կարակողովը, նեչա-
յեվը, Զերնիշեսկին և ուրիշ շատ և շատ հեղա-
փոխության զինվորներ։

Պատմում են, թե յերբ այդ բերդում նըս-
տածներից մեկը հարցրել ե, — յերբ կազատվեմ,
— ինչ վոր մեկը չարախինդ պատասխանել ե.
— Այստեղ յեկողները կամ խելագարվել են,
կամ ինքնասպան յեղել։ Կամերաների դուռը
շատ քիչ մարդկանց առաջ ե բացվել։

Բանդարկվածները եղ բերդում անուն չու-
նեյին, նրանց բերելու ժամանակ արձանագրը-
գում եր. — «յեկավ մի անհատ»։ Խելագարվելուց
կամ ինքն իրեն գգելուց հետո, արձանագրվում
եր. «դուրս գրվեց մի անհատ»։

— Նրանց կենդանի՝ պիտի թաղել, նրանց
մասին չպիտի գիտենա և վոչ վոք, նրանք ա-
նուններ չունեն իմ թղթերում»։

Այսպես ե հրամայել բերդի դիմաց կանդ-
նած քյոշքի տերը։

Յեկ այսպես, քանի տասնյակ տարիներ
վոչ մի անուն չի արձանագրված նրա թղթե-
րում...

Յեկ քանի քանի անանուն հերոսներ բոր-
քունել են, անարկ մգլել։

Ալեքսանդրովսկի Ռեկլին...

Ո գաժան, գաժան, գաղտնախորհուրդ ան-
դյունը բերդի։

Յեղել ե, կերել ե, տարել ե, կորսվել ե,
չկա հիմա:

Համը ու մռայլ, իրար հաջորդող և վոչ Ճի
կամերա չասավ եղ մասին վոչինչ։ Լուս շատ
ցուռ եյին հաստ պատերը, միակ մեխված յեր-
կաթի մահճոկալը և փոքրիկ չլուսավորող
պատուհանը։

Վոչ մի հուշ ընկածների, վոչ մի հիշատակ
կենդանի և անանուն թաղվածների։

Քյոշքի գիմաց, Պետրովավլովսկի ամրոցի
կտմերաներում, այնտեղ ուր յերբեշ չի նայել
արել, այնտեղ, վորտեղից և վոչ վոք չի տեսել
յերկինքը։

Թագավորի քյոշք ու ոարայի դիմաց, ուր-
կից նու շատ հաճախ, հայելաջինջ ապակինե-
քից դիմում եր իր բերդն այն ոբերին և ուրա-
խանում, հրճվում, անհուն հրճվում կենդանի
թաղված հերոսների մահով։

Այդպես Ֆր կամքը մեծ թագավորի, այդ-
պես եր ցանկանում նաւ:

Սիրելի Հազո!

Դու լուռ կարդում ես յերեխի այս տողերը
և չեմ ուզում կասկածել, վոր կը քիշիդ տակը
հանգիստ չե։ Անպատճառ նա պղտորվել ե հիմա
և ուզում ե դուրս գալ ափերից։

Նա շատ բան ե տեսել, շատ զուլում, շատ
կրակ ե հիմա յել Պետրոպալովսկու պատմու-
թյունը...

Մի տեղ կենդանի յեն թաղել, տասնյակ
տարիներ տանջել ու չարչարել, մյուս տեղ ամ-
բողջ գյուղեր հենց մի քանի որում հրդեհել,
կրակ տվել, մորթել, քերթել, բոլորին, բոլո-
րին, կին, մանուկ, մայր, քույր. միասին և շատ
հենց վոչխարի նման։

Յեկ դրանք ել անանուն, դրանք ել ան-
թաղ...

Ներիք ինձ սիրելիս, վոր յես փորփրեցի քո
հիշողությունը. ներիք, վոր դեռ կշարունակեմ։

Յես դիտեյի, վոր մեկը լսելիս մյուսը կհի-
շես, չնայած այնքան հեռավորությունների
վրա յեն կատարվել այդ սոսկալի վոճիրները։

Վորքան հեռու յե Պետրոպալովսկի բերդը
Անդոք*) սարից.., վորքանհեռու յե քյոշքը Ֆռ-
ֆոն**) բարից։

*) Մասիսը. **) Տալլորիկ գյուղի ապառաժներից խոշորագույնը

Յերկու տեղն ել հոսել ե իզուր և անմիտ .
անչափ արյուն, ճոճվել ու փետացել բողոքի
բարձրացած անթիվ բոռւնցքներ, մարել են մի-
ևնույն ճրագները...

Մի տեղ անհավասար պայքարում, ուրիշ
տեղ յերկաթե գարշապարի տակ։

* * *

Բերդի գլուխցն ե կանգնած մեծամեծ թա-
գավորների դղյակը։

Նրա գույնը մուգ կարմիր ե, այն մուգ
կարմիր...

Յես չեմ կարող ինձ զսպել և ուզում եմ
ասել քեզ. ուզում եմ հայտարարել բոլորին,
վոր նրա գույնը շատ ե նման են առատ ու
եժան թափված արյունի գետերին, վորոնց մի-
ջով մենք փախանք։

Դու պետք ե հաստատես, դա ճիշտ ե,
նա նուն ե, նրա ավագն ու քարը շաղախված են
միլիոնավորների տռատ թափված արյունով։

Նո շքենց ե, նա փարթամ ե, նա փառահեղ
տեսք ունի, նա անչափ գեղեցիկ ե, գեղարվես-
տական, գերազանցում ե քաղաքի բոլոր շենքե-
րին, 1000 սենյակ ունի, այն հիանալի յե...
բայց նա դիակների վրա յե կառուցված, նա
արյունով ե շաղախված։

ԶԵ՞ վոր ահա այստեղ, նրաւ առաջ, գեղեցիկ այս հրապարակում, վորախղ և անմենդության և բարության հրեշտակն եւ կանզնած մի մարմարե սյունի գլխին, հենց այդտեղ, հունվարի 9-ին, Պետրովդրադի անգեն բանվորությունը գընդակահարվեց: Քանի քանի հայրեր ու մայրեր, վորոնք միամիտ դեռ, յեկել եյին քյոշքի տիրոջ «վողորմածությանը» դիմելու, ընկան արյունաթաթախ եղ սալերի վրա, մեծ թագավորի քյոշքի առաջ, նրա հրամանով կանգնեցրած «անմենդության ու բարության» հրեշտակի վոտների տակ:

Ո՞ ինչ անմեղություն և ինչ բարություն... «Բարության և անմեղության հրեշտակ թագավոր»...

Ինչու պիտի արյունով ներկվեր և գեղեցկանար այդ քյոշքը, ինչու պիտի արյունով լը-վացվեր նրա հրապարակը...

Միթե նեվա գետի ջուրը չեր բավականացնում նրա շաղախը պատրաստելու...

Ասեցին՝ այդպես ցանկացան, այդպես կամեցան նրա սերերը...

Սիրելի Հագո՞!

Յես, մեղավորս, հարցը են մասին, թե ինչքան եւ ծախսված և վճրտեղից, նրա կառուցման վրա:

Ծիծաղեցին, գլուխները տարան-բերին.
— Այդպիսի թիվ չկա, այդպիսի թիվ հայտնի չե և վոչ վոր դեռ չի հայտնաբերել:

— Բա ենքան հաշվառահներ կան մեր գրասենյակներում, ինչքան համբիչներ կան նրանց սեղաների վրա, թվաբանությունը կատարելադրության գիտություն և դեռ արաբական կուլտուրայի շրջանից:

Ինչու չեն հաշվել, ինչու չեք հաշվում:

— Այդպիսի թիվ չգտնվեց... թվաբանությունը չունեց:

Հաբա այն մարդկանց թիվը, վորոնց կաշին քերթվել ե, վորոնց արյունով շաղախ ե պատրաստված, վորոնց ուսերին կառուցվել ե...

— Այդ թիվը ել չկա...

Չկա, չկա և չկա սիրելի Հագո՞! հասկանում ես, չկան եղախիսի թվեր:

Դրա համար ել սիրելի Հագո՞! յես, դու և շատերը մեզ հետ չնդունենք, վոր նա գեղեցիկ ե, վոր նա շքեղ ե, աննժան ե և ուրիշ-ուրիշ նման գովասանքներ:

Յես գովաբանեցի, յես ինքս ասեցի, բայց դա սուտ ե. Թող յես լինեմ սնախոս:

Դրա համար եր, վոր իվանը Հոկտեմբերին քիչ եր մնացել հրդեհեր, ողը ցնդեցներ, բայց կենինը դեմ եր.

Թող մնա... թող դան սերունդները և
տեսնեն իրենց պապերի արյունից, արցունքնե-
րից և անլուր տանջանքներից կերտված, թագա-
վորների ապարանքը:

—Ճիշտ ե... թող մնա, թող մնան, —ասեց
Իվանը, ասենք և մենք ու հանգժնենք մեր կոր-
քերը.

Յեվ նա մնում է:

Սի, դաժան որերի անփառունակ դոյակը:

* * *

Հազո՞ր ջան!

Յես հազիվ կարողացա քեզ պատկերացնել
քյոշի արտաքինը: Յես հիմա մանում եմներս:
Դժվարանում եմ սկսել:

Ինչպես սկսեմ, վորից, վհր կարգով,
վոր կարողանամ պատկերացնել քո առաջ այն
«սրբազն լրախտ»-ը, վորի մասին ենքան շատ
պատմում եր մեր գյուղի Տեր-Սողոմոնը:

Դու հիշում ես, չե, Մեծ-Նանի հեքյաթնե-
րը թագավորների, նրանց քյոշի ու սարայնե-
րի ու գանձերի մասին: Այ, վերհիշիր և նրանք
թող ուղեկցեն իմ նկարագրության և դու հեշ-
տությամբ կհասկանաս ինձ:

Դու յերևակայում ես քո գյուղացուն Ա-
լեքսանդր յերկրորդ կայսրի կաթինետում: Մի

վախենա և մի կասկածի, միայն հավատա, վոլք
դա ճշմարտություն ե:

Այդ իհարկե անհնարին կլիներ, ցնդաբա-
րանություն, մի յերազ են ժամանակ, բայց հի-
մա՝ վոչ, դու ել յեթե գաս եստեղ, կարող ետ
մանել. որական քանի, քանի գեղացիներ ու
բանվորներ մանում, յենում են ահարկու թա-
գավորների, լսում ես, Ոսի թագավորների
քյոշը:

Հիմա հավատացիր անպատճառ. դու ինձ
կհասկանաս, դու ինձ կհավատաս:

Յեվ այսպես. յես կանգնած եմ ժանդարմ-
ների ժանդարմ—Ալեքսանդր կայսրի սեղանի
առաջ:

Այս սեղանի վրա յե հրամաններ արձակեր
ու ստորագրել այդ գաղանը:

Ահա նրա գրիչը, ահա աջ կողմում որա-
ցույցը, Վերջին անգամ նա բացվել ե իր սե-
փական ձեռքով 1881 թվի մարտի 1-ին:

Այդպես ել մնացել ե: Նա եղ որ ել տուն
չի վերադաբել:

—1881 թվի մարտի 1-ին, հեղափոխական-
ները նրա վրա բոմբ գցեցին,—մասում ե պատ-
մությունը. նրա վորդին հենց այդ որը կանգ-
նեցրել ե ժամացույցը. ահա նա, կանգնած այդ
որվանից:

Բայց յես հազիվ եմ լսում պատմողին. իմ
հայացքը բևեռվել ե սեղանի մեջտեղ, վարտեղ
արքայի գրիչն ե հանգիստ, ել հավիտյան ան-
գործածելի ընկած:

Ո՛, վորքան ուրախ եմ, ինչքան լավ ե...
վոր այդ գրիչը հավիտյան անգործածելի յե-
մալու, վոր նա վաղուց ե դադարել սարագրե-
լուց:

Այդ խոսքերով ինձ միմիթարեցի, հանգըս-
տացա մ'ի քիչ, բայց... չեղավ:

—Զի կարելի դիպչել և վոչ մի բանի,--
հայտարարված ե ամեն մի քայլում:

Յես համառեցի, ավելի մոտեցա նրա սե-
ղանին և վերջապես վերցրի գրիչը, յերկար դի-
տեցի, մի քանի ձեռվ մի քանի անգամ:

Հիմա քեզ հարց ե գտուել, լավ ի՞նչ մի կա-
խարդական գրիչ ե եղ քամբախը, վոր եղքան
զբաղեցրեց ինձ:

Յեվ ե կախարդական գրիչ: Նրա մի շար-
ժումով մարում եր մի տան ճրագ, հանգչում
եր մի ոջախ, դադարում ելին անմիվ սրաեր:

Իսկ գիտե՞ս քանի անգամ ե նա շարժիել...

Այդ գրիչը, վսակեծայր գրիչը մեծն արքայի:

Յես ուզեցի փշրել իմ ձեռքերի մեջ, ուզե-

ցի կտորների վերածել և մի կտորն ել քեզ ու-

դարկել...

Բայց... «թող մնա... թող գան սերունդնե-
քը»... ահսնեն...

Ճիշտ ե հանճարեղ առաջնորդը: Յես թողի
գրիչն իր տեղում և անցա առաջ:

Լեցված ե... լիքն ե. տեղ չկա կանգնելու.
անհաշիվ, անկարգ, միայն թե լինի, միայն թե
պապղա, հայելիների ծովի մեջ շողշողա և աչքե-
րըդ ծակի, անպատճառ ծակի:

Պատերը ապրշում են հազել. հասկացար,
չափն, ապրշում, ապրշում. և վոչ թե պատերը,
աթուներն ել, սեղաններն ել, մահճականները,
մեկ խոսկով ամբողջ բյոշը ապրշում ե հազել:

Ինչքան յելակ, շապիկ, ֆստան դուրս
կդար...

Բոլորին մերկացրել են իրենց պատերը
հազցնելու համար:

Ու անթիվ ե, անհամար նրանց «կարողու-
թյունն ու հարստությունը»

Կարծում յես փախնելու ժամանակ, կարո-
շացել են մի բան անդամ «շալակել» ու փախ-
ցնել, վոչ իհարկե վոչ:

Յեվ լեցուն ե: Մեծ իրավաւնքը պատկա-
նում է վսոկուն, արծաթին, զմրուխտին, մար-
շան, քյարեար, առ ել մարմար ու ել ուրիշ ու-
րիշ ինչքան թանգ բան Փառական գրադարան Գ. Ենօնութեան
Հ. Ա. Մանուկյան Անդամ Հ. Ս. Սահմանական Անդամ



Դրանք չեն զարդարում, ավելի ճիշտ, լեցվել են, կուտակվել են։ Սենյակներ կան, վորհատկապես դրանք են ապրում միայն։ Հաշիվով մեկն ե, հաշիվ չկա, վոչ ել կարգ, հերթ։ Պատերը չեն յերեռում, նրանք կորսվել են «զարդարանքների» և հայելիների ծովի մեջ։ Մեջը մտնես, մեկ հագոյի տեղ, հագար հագո կերեկ։

«Ամենագեղեցիկ» զարդարանքները, դրանք հաստամոռթ, հաստավիզ ու կարմրաքիթ իշխաների, իշխանուհիների, կնյազների, գեներալների, վսեմափայլ թագավորների, նրանց պլազու, քեռու, խնամու, մոքոր, հոքորների և վերջը ամբողջ թախումի նկարներն են։ Չեն մոռացված դրանց կողքին և նրանց շների պատկերները։

Ճաշակի մասին հարցրինք, ասին թե՝ «Եղաղես եր թագավոր սկան «Ճաշակը»...

Լավ, ընդունենք։

«Թագավորական ճաշակը»...

Բայց նույն այդ պալատի դիմաց բարձրանում ե Պետրոպավլովսկի բերդը։

Ժողովրդի լավագույն զավակների, հեղափոխության զինվորների գերեզմանը։

Դա ել չժամկանորական ճաշակ» ե։

* * *

Սիրելի Հազո՞!

Շատապում եմ համել քո մտքերին։
Յես զգում եմ, վոր նրանք սկսվել են բորբոքվել, ընդարձակվել և առաջ մղվել։

Որերը, վորպես պայծառ լուսարձակ, ճառագայթել են յերբեմնի խոնավ մաքերիդ ծալքերում և հիմա լույս ե այնտեղ, լույս արեւ։

Ուրախ եմ, անհուն ուրախ, վոր վնչ աստծու և վնչ թագավորի «ամենազոր» կարողությանց և ուժի մասին, հավատի նշույլ անդամ չի մնացել քո մեջ։

Ուզում եմ ուրախության մի յերգ յերգել, ենքան բարձր, բարձր, վոր բոլորը լսեն։ Նրա համար, վոր եդ «սուրբ» զորությունները տեղ չունեն քո լուսավոր մաքերում։

Զե՞ վոր դեռ յերեկ եր, յերբ դու շերմեռանդ եյիր, յերբ դու հավատում եյիր ինչ վոր ուժերի, ինչ վոր մարդկանց։

Յես մանուկ եյի, բայց պայծառ հիշում եմ քո ենքան վառ հույսերը, ենքան սպասումները։

Յես չեյի հասկանում, բայց հիմա համկացաւ վորքան իզուր եր քո հավատը, քո հոյցաւ։ Այս բոլորն եյին են որերին մանուկ դառել ինձ հետ, բոլորը մանուկ հույսերով ու սպասումներով եւ ին լեցվել։

Այն 1914—15 թվականներին եր: Այնտեղ, մեզ մոտ, լեռներում, Անդոքի փեշերում:
Դու ջերմ հսկատում եյիր, դու սպասում
եյիր միշտ, դու շարունակ կրկնում եյիր.

—Մի քիչ ել համբերենք, մի քիչ ել դիմա-
դրեն մեր աղերքը և Ռուսը կհասնի: Ռուբեն
փաշեն անթել հեռագիր ե ստացել: Անդրանիկը
գալիս ե սաների առաջն ընկած. մենք կազատ-
վենք, մենք կփրկվենք, Ռուի թագավորն ապրած-
կենա:

ՀԵյ վախ...

Դու ջերմ հավատում եյիր... դու աղոթում
եյիր...

Բայց իդուր... իդուր և իդուր:

Ռուի թագավորը բիլիարդ եր խաղում են
որերին, յերբ «անթել հեռագիրը» չեկավ, յերբ
թագավորի դորքերը վորուս թե նահանջեցին
Բլանուխից, յերբ Ռուբեն փաշան թողեց մեղ
բոլորին և իր «կտրիճներով» փախավ Քանա սա-
րերով, ազատվեց, վոր հետո, «ազատ և անկախ
Հայաստանի» մինիստը դառնար և նոր գար «հաս-
ներ» և «ազատություն» բերեր մեզ:

Ո՞ ինչ ցնորք... ինչ խաբերայություն...
մեր արյան գնով:

Մյուս որը լեռներից գլուխ ջրեր

տեղ արյուն եր հոսում... մյուս որը մեր ծառ-
ու ծաղկունք աշունք մտան և վայրի քուվիներն*):
անդամ, աւեղ չգտան մեր յերկլում...

Հավատան ինձ սիրելիս, վոր նա մեր գոյու-
թյան մասին չեր լսել, վոչ մի «անթել հեռագիր»:
չեր պատրաստվել ուղարկելու և վոչ մի «կար-
գագրություն» չեր արել մեր մասին:

Հավատան Հագո! վոր նրա «հաղթական»
զորքերը մեր «գեղեցիկ» աչքերի համար չեյին-
ուղարկվել և վոչ ել «հայ ազգի» սիրուն.

Հավատան սիրելիս!

Յես ել չեմ նայում: Իմ աչքերը հոգնել են-
Միայն լուռ լսում եմ, պատմությունն ենքաւ-
յերկար ե... լուռ... միալար... կոշմար:

Ահա վերջապես բացվում են այն սհնյակ-
ները, վորտեղ անցկացրել ե իր մետաքսե կյան-
քը, ինքը—Նիկոլայ թագավորը:

Իհարկե դու կզարմանաս թե ինչպես եմ-
զսպում ինձ, ինչպես եմ կարողանում ինձ վրա,
բայց ինչպես ուզում ես պատկերացրու. քո-
գյուղացին Նիկոլայի սհնյակներումն ե, նայում-
ե, տեսնում ե, զգում ե: Ո՞ ինչքան դժվար ե
չագո, այս ըոպեյիս շալակել ձեր բոլորի ցկա-
ցումները, հեղեղել իս յերակները ձեր բոլորի-
տաք, վրիժառու արյունով:

*) Վայրի այծ

Դժվար ե, բայց տանում եմ՝ պիտի տանեմ:

Լսում եմ լուռ, պատմում են...Այստեղ նրա առաջին քարտուղարն եր նստում, այստեղ յերկրորդը, այստեղ առաջին հավատարմատարը, այստեղ մյուսը։ Այս սենյակում նա ընդունում եր արտասահմանի հյուրերին, այս մյուսում հյուպատոսներին, ահա այսեղ ել վերջապես իր մինիստրներին։ ահա նրա «ըլլիթարդախանոցը»։

Նիկոլան շատ եր սիրում բիլիարդ խաղալ. մանավանդ են որերին, յերբ գետերն արյունաներկվում եյին, յերբ տնձրեվի գույնը կարմրում եր։ Նա «շատ եր ատում» նման յեղանակները և բիլիարդով մոռացնել եր ուզում տալ..»

Լսում եմ և շատապում եմ հասնել:

Ահա այս թռչուններն ել, կովկասյան չեռներից են. Վարժնցով—Դաշկովն ե նվիրել, Նիկոլային զուր եր յեկել կովկասն իր բնությունով և բնական հարստություններով, միայն զուր չեր յեկել նրան բազմազդ կովկասյան ժողովուրդը, փորն իր ազգային դպրոցն ե ուզում ունենալ իր մայրենի լեզուն չի ուզում մոռանալ։

Եղ մեկը հեշ զուր չեր գալիս նրան և հարկավոր միջոցների նա դիմել եր և դիմում եր եղ ուղղությամբ...

Պատմությունը յերկար ե, յես լսում եմ ու գեռ բացվում են դռներ, դեռ չի վերջանում... Վերջ չկա ի՞նչ ե...

Ինչո՞ւ համար... ում համար, միթե այդքանց շնակվողներ են յեղել...

— Զե, —պատասխանում են, մարդկանց թվի հետ կապ չունի. եղանակ եր, թագավորաց ճաշակ եր...

Ու ելի շարունակում ենց անցնել ու ելի «ճաշակի ցուցահանդես» ու ելի պապղում են, շղարշում են, շղղողում մետաքս հագած սենյակները և լիրը, լիքը, տեղ չկա, բողոքում են։

Ստիպված ընդունում ես, վոր ել վոչ միտուն բան չի մնացել, բոլորից թալանել են, գրավել, բերել եստեղ զիգել։

Ահա թե ինչո՞ւ մարդկանց թվի հետ վոչ մի կապ չունի եստեղ «բնակարանային» հարցը։

Հաղիկ տեղավորվել ե ամենահսկա թալանու ավարը։

Յես քեզ սկզբից ասի, վոր սա իմ և քո ապրած և գիտեցած աներից չե. այս տունը նման չե այն շտուտ տներին, վորոնք մեզ ծանոթ են, հարազատ, վորոնք մեզ հետ կարող եյին փախչել անգամ լեռները։

ՀԵՅ դիմի...

Այստեղից պիտի խփվեր Ռուբեն փաշային
«անթել հեռագիր», այս քյոշքից եյիր դու սովում
«ազոտություն», «ոգնություն» և «խայի
Խայաստան»:

Դու մենակ չեյիր, շատերն եյին, բոլոր...
բոլոր Հագոները:

Ցեվ բոլորով հավատում եյինք, սպասում...

— Ռոի թաղավորի զորքերը կգան մեզ ա-
պատելու, ինուիդն ու Թրանցուզն ել են մեկ
թարաֆից:

Ցեթե յես թմբկահար լինեյի, հիմա ուժգին
կիսիեյի թմբուկին, ձայն կբարձրացնեյի, հաղ-
թության ձայն: Ցեթե՞ մի պղնձե որկեստը լի-
նեյի, պղնձե ուժգին վորոտում կանեյի, կբար-
ձրանայի ինտերնացիոնալ յերգելու, ո ուրա-
խություն, ցնծություն, հրճվանք, ել դու չես
հավատում, ել չենք հավատում, չեն հավատում
շատ և շատ Հագոներ, ել չկա, քեզ, նրանց, մեզ
համար, վոչ աստված, վոչ թաղավոր և վոչ ել
Ռուբեն փաշա:

Ցես այլես չեմ ուզում դիտել, առանց դի-
տելու գիտեմ, թե ինչ պիտի դա, ինչ պիտի

հաջորդի նախորդ տեսարանին և այդպես շո-
բունակ:

Ցես լսում եմ, պատմում ե, պատմում ե-
և հանկարծ մի հայտարարություն... մի նախա-
դասություն... այնպես սուր, շատ սուր ծակեց,
անիրավ ծակեց իմ ականջը, մի հսկա քարի նը-
ման, ընկավ իմ ուղեղին:

Ցես շատ անքաղնքավարի կերպով ճեղքե-
ցի իմ առաջ խմբվածներին և առաջ անցա:

Շատերը գարմացան:

Անվայել վարմունք ե:

Բայց յես վոչ վոքի չբացատրեցի պատճա-
ռը, չուզեցի հայտարարել, վոր յես մեղավոր չեմ,
վոր յես ուզեցի ավելի մոտիկ տեսնել են կար-
սիր գորգը, վորի մասին խոսք յեղավ, լավ լսել
կարսիր գորգի մասին:

Ցեթե յես վոչ վոքի չբացատրեցի վոչինչր
քեզ անպատճառ պիտի հայտնեմ, պիտի գրեմէ
Դու ամենից գուցե լավ ես հասկանում սիրելի
Հագո՞

Կարմիր եր այդ մեծ, թանկագին գորգը-
կարմիր, շատ մուգ կարմիր... Նա հիմա ել փըռ-
ված ե նիկոլայ թագավորի ննջասենյակում:

— Թանկագին նվեր ե, գեղեցիկ նվեր ե,

Թագավորական նվեր ե Նիկոլայի ծննդյան տարեղարձին նվիրված:

— Իսկ վոր թագավորն ե նվիրել:
— Թյուրքած Սուլթանը...

Յեվ դրանից հետո, վոչինչ չլսեցի, ու հոռվկեցին իմ պիտում ինչ վոր բառեր միայն, հոռվկեցին յերկար, յերկար...

Կարսիր զորգը... Սուլթանի... նվեր... են ել թանկագին... ուստաց մեծին... իր ծծնդ... և անպատճառ մուգ կարմիր...

Դա գուցե. պատահականություն ե, գուցե ընդունված ե թագավորը թագավորին եղափսի նվեր ուղարկի, գուցե կարմիրը գույների թագուհին ե, կամ մի ուրիշ գուցե..

Բայց, վհչ, վհչ հագար անգամ վհչ, դա սըխալ ե... և...

Ուզեցի բարձրածայն բղավել, ուզեցի հայտարել թե ինչով եներկված, բայց... չեղավ... կուլ տվի... արձանացա... կորցրի տեղս... հետ դառա և չնայեցի յել:

Ախար չե՞ վոր եղ յերկու թագավորները իրար թշնամիներ եյին, մեր դաշտերն ու լեռները դարձրին իրենց կովի դաշտ, հագար-հագար մարդիկ եյին իրար դեմ հանել, արյուն, արյուն, կծեցին կծեցին իրարու...

Յեվ հիմա նվեր իրար, թանկագին և այն ել ինչով ներկած...

Դու հիշմում ես Հասանին, և նրա յեղբորը են մեր հարկան թյուրք գյուղացիներին, նրանք, վոր որվա հաց չունեյին, նրանք մեզանից խեղճ եյին և ինչքան սոված որեք եյին անցկացնում: Քանի քանի աղա ու փաշա նրանց մեջքին մըս-րակ չեր իջեցնում:

Յեվ վերջն ել քշին տարան ասկյար, յանի թե ոսի գեմ ու «կոխի անելուց» հետո, ընկան Հասան-Ղալայի կոփմերում:

Ի՞նչ եր յեղել, ի՞նչու համար, ում համար, վոչ նրանք իմացան, վոչ դու վոչ նա:

Հիշիր մեր քիրվա Բրահմիմին, նա, վոր սարբարձրացնելիս վոչխարները, սիրում եր նստել մի բարձր ժեսի գլսին ու բարձր, բարձր կամ յերգում եր, կամ սրնգում «Դարդո», հեյ դարդո» չոբանի յերգը:

Նա ամբողջ իր սիրուը քանդում եր այդ յերգի հետ, իր ամբողջ դարդերը տալիս եր սրնգին: Իսկ ինչքան դարդ ուներ նա...

Կովի սկզբներին ենքան եր մելամաղճում նվագում, ենքան տիսուր եր նրա «Դարդոն»:

Եղ են որերին եր, յերբ նրա աղան, պատրաստվում եր հարձակվելու մեր գյուղի վրա-

Բրահիմի սրբնովը ավելի զիւ եր հնչում,
ավելի բարձր եր նա կանչում և կտրծես թե,
նախազգում եր մեր քիրվան, վոր պիտի կտառար-
վի սոսկալին, վոր նրա և մեր սիրած սարերը,
արյունով են ներկվելու...

Հեյ, հեյ Դարդն...

Նա յել ընկավ իր աղայի համար մեր գեմ,
իր գնդակները յերկինք արձակելիս:

Յես այնքան լավ եմ հիշում, դու յերբ լսե-
ցիր եղ մասին, այնպես ցավկցիր, ինչպես ցա-
վում եյիր յերբ քո Գևոյին մոռթեցին:

Մենակ Բրահիմը չնկալ, մենակ չասոն չը-
մնաց անթուղ և մենակ Գևոն չմորթվեց:

Շատերը, շատ շատերը, միլիսներ թափե-
ցին եժան արյուն...

Վոր Սուլթանի գորգը մուգ կարմիր ներ-
կվեր, վոր ոռւսաց կայսրը հավաներ...

Հեյ դարդն, դարդն, Բրահիմի դարդն, չա-
սանի դարդն, Գևոյի դարդն...

Վոր Սուլթանի նվերը կարմիր, վոր Ռոի
թագավորը հավեր. .

Սիրելի Շագն!

Զգիտեմ ինչու, ինձ թվում ե, թե քո աչ-
քերը արդեն թրջվել են հիմա.

Ներիր ինձ, յես հիմա գուրս կգամ այս
դաժան ապարանքից, վորտեղ տմեն ինչ արյու-
նով ե ներկված և արյունով կերտված:


Յես գուրս եմ գալիս և պիտի զնամ այսոր,
անպատճառ պիտի զնամ Սմոյնի:


Այստեղ ուր գծվել ե ազատության ուղին,
իմ, քո և ուրիշ միլիոնների:

Ո՞, յեթե իմանային քյոշքի տերերը, վոր
Հագոյի գյուղից ազատված ինչ վոր պատա-
նի, «համարձակվել» ե, վոչ թե միայն ազա-
վել, այլ և նրանց «անսպիկ» քյոշքը մտնել...

Յեթե իմանային...

Լենինգրադ—Մուկվա
1926 թիվ





34874

ԳԻՆ և 10 ԿՈՎ.